

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ:
Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՄՇԱԿ

խմբագրությունը բաց է առաւել 10—2 ժամ
(բացի կիրակի և տոն օրերից)
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաւարանիւր բառին 2 կոպեկ:
Տ է Լ Է Ք Օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՆԵՐԿԱՅ 1896 ԹԻԱԿԱՆԻՆ

24-ՐԴ ՏԱՐԻ

24-ՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

ԻՐԱՎԱՆՈՒԹՅԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ԼՐԱԳԻՐ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն դիրքով, նոյն պրոպրիետարով և նոյն ուղղությամբ: Մեր ստանդարտը ենթակա է փոփոխության:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է

«ՄՇԱԿ» տարեկան գինը թէ Ռուսաստանում և թէ արտասահմանում 10 ռուբլի է, տանն և մէկ և տանն ամսականը՝ 9 ռ., ինն և ութ ամսականը՝ 8 ռ., եօթ ամսականը՝ 7 ռ., վեց ամսականը՝ 6 ռ., հինգ ամսականը՝ 5 ռ., չորս ամսականը՝ 4 ռ., երեք ամսականը՝ 3 ռ., երկու ամսականը՝ 2 ռ., մի ամսականը՝ 1 ռուբլի:

«ՄՇԱԿ» գրվել կարելի է ՌԻՍԱԳՐԱՏԱՆԸ (Բաղրատայա և Բարոնակայա փողոցների անկիւն):
Կայտարարութեան ուրիշ քաղաքներին «ՄՇԱԿ» գրվելու համար, և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելու, պէտք է դիմել հետևեալ հասցեով. ТИФЛИСЪ, Редакция «МШАКЪ», իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien «MSCHAK»:

Գէորգ Բայսոյդեանը և իր քոյրերը յայտնում են իրանց ազգականներին և ծանօթներին իրանց հօրաքոյր, դէսէրայ-մայօրի այրի

Տ Ի Կ Ի Ն Ն Ո Ւ Ն Է Ե Ի Ա Ն Գ Ո Ւ Լ Ե Ա Ն Ի

մահը, որ տեղի ունեցաւ յունվարի 23-ին, առաւօտեան ժամը 8-ին: Ամբիճը կը կատարվի ուրբաթ և շաբաթ յունվարի 26-ին և 27-ին, երեկոյեան ժամը 6¹/₂-ին: Յուզարկաւորութիւնը տեղի կունենայ սեփական տնից, Ելիզաւիտինսկի փողոց № 106, դէպի վանքի մայր եկեղեցին, կիրակի, յունվարի 28-ին, առաւօտեան ժամը 10-ին:

1—2

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Պէտք է ուրիշ կերպ գործել: Օրինակներով եւս պահանջ. Սովետների համար.—ՆԵՐԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Գիւղական ինքնավարութեան ընթացիկների խնդիրը. Նամակ Երևանից. Նամակ Ղու-

բայից. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. —ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ. Վերջին տեղեկութիւններ. Նամակ Պարսկաստանից.—ՀԵՐԱԳԻՆՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆՆԵՐ.—ԲԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ. Նամակ Ամերիկայից:

ԲԱՆԱՍՈՒՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Ձօրջտառն (բրիտանական Գոլիանա)

Յունվարի 8-ին

Անցեալ նամակով կարծես հազարգեցի, որ այստեղից չոգնաւորը երկու շաբաթ մի անգամ, չորեքշաբթի օրերն են գնում դէպի Եւրոպա: Այսօր, ուրեմն, առաջին անգամն է, որ առիթ պատահեց յոգնաւորին: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից:

Մենք հասանք այստեղ ամսիս 2-ին, մի օրով ուշացած լինելով ճանապարհին, ուղիղապէս վրա տիրող վատ եղանակի պատճառով: Իմ այստեղ գալու օրը մեկնում էր մի քանի ժամից յետոյ այն չոգնաւորը, որով ևս վաղը պիտի երթայի, բայց ևս չը կարողացայ նրանից օգուտ քաղել: Երբեք չեմ տեսնում այստեղից չոգնաւորներ: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից: Եւ պիտի չապաւանդուէ հարաւային Ամերիկայից:

Տրոպիկային երկրներին ինձ պէս անծանօթ մի մարդու վրա այս երկիրը մի զարմանալի դժուրեցնող ապաւորութիւն է գործում, զիստաւրապէս իր ճիւղ բուսականութեամբ, իր մշտական կանաչով, որ կարծես անխառն է, այն գեղեցիկ զոյններով, որ նկատվում են թէ ծաղիկների, թէ միջատների, թէ թռչունների վրա, իր գմայլէ կապտաւ երկնքով, իր փայլուն արեգակով, լուսինով, աստղերով, որոնք այնքան բազմաթիւ են երևում, որ ասես ազատ տեղ չեն թողնում երկնքի վրա: Ժողովրդի մարդիկը այստեղ ոչինչ կարիք չունեն նրանք բնիկ են բնականաւոր և բնութիւնը նրանց տալիս է աւել

լի քան հարկաւոր է. բազմաթիւ մրգերը անպակաս են, գետերը լի են ձկնորով, ամենաշնչին աշխատանքը բաւական է ամեն ցանկացած բոյս, բանջարեղէն, միրգ բուսցնելու համար: Ամեն բան, որ նորեկը տեսնում է, որ նրան չըբաւարարում է, նրա համար այնքան նոր է, այնքան տարօրինակ, չը նայելով որ նա կարգաւոր է նկարագրութիւններ—այնքան անսպասելի և այնքան գերազանցում է նրա երևակայութիւնը, որ գիտար է այդ բոլորը նկարագրել, մասնաւորապէս որ անհնարին է համեմատել արդէն տեսած, ծանօթ առարկաներին, արդէն ունեցած արտաբանութիւններին: Նեւ այդ արտաբանութիւնները այնքան բազմաթիւ են, որ մարդը չը գիտէ ինչի վրա ուշադրութիւն դարձնի: Երբեք չեմ տեսնում ամեն բան ուշադրութեամբ արժանի է:

Այն ինչ Եւրոպայում և մեր երկրում այժմ անկասկած ցուրտ է տիրում, ձիւն կամ անձրև է գալիս, այստեղ ընտելիւր թարմ ու կանաչ է, ամեն տեղ ծաղիկներ ու մրգեր: Եւ այս դրութեան մէջ այստեղ ընտելիւր գտնվում է գրեթէ ամբողջ տարի և յիշեցնում է մեր գարունը կամ ամառվայ սկիզբը: Ամբողջ տարին ջերմաւոր է գրեթէ նոյն կէտի վրա է մնում և ստուկաւոր մէջ ցոյց է տալիս 24 միլիոն 30 աստիճան 35-ի շրջան: Հենց որ արեգակը պատրաստվում է մայր մտնել, ծովից փչում է կաղզուրիչ հովը և ամենքը դուրս են գալիս ոտով կամ կառքով պտույտ անելու: Ճաշելուց առաջ, որ այստեղ սովորաբար լինում է ժամը 7-ին կամ 8-ին: Ձրուսնելու տեղերը անպակաս են: Բաւական է այս գին, քաղաքի այգին, ծովափը և այլն: Բայց առանց զրան էլ կարելի է պտույտ անել և բազմաթիւ փողոցներով, որոնք շատ լայն են, մարդու և ծառապատ:

Մենք գտնվում ենք ոչ հեռու Էկվադորից, լայնութեան 7-րդ աստիճանի վրա, և այս պատճառով թէ գիշերը, թէ ցերեկը տեղում են մօտ 12 ժամ ամբողջ տարվայ ընթացքում:

ՊԵՏԻ ԵՒ ՈՒՐԻՇ ԿԵՐՊ ԳՈՐԾԵԼ

«Մշակ» այսօրվայ համարում ապագա նամակը Ղուբայից, այդ քաղաքում թուրքաց էթանազին զորադրան բանալու մասին, ցոյց է տալիս, որ մեր երկրի թուրք ազգաբնակչութեան ինտելիգենտ մասը կարողացել է, վերջապէս, ըմբռնել եթէ ոչ ամբողջովին, գէթ մասամբ՝ զործունեութեան այն եղանակը, որ ամենից նպատակաւոր և կանոնաւորն է մահմետական տարրի մէջ քաղաքակրթութիւն և լուսաւորութիւն տարածելու համար:

Այդ եղանակն է—բանալ կրթական հաստատութիւններ եւրոպական ձևով հիմնել էթանազին զորադրան—ընթերցարաններ, կարգալ հրապարակական դասախօսութիւններ, մատակարարել մահմետական ազգաբնակչութեանը մտաւոր առողջ, մարդու սնունդ, տալով նրա ձեռքը դիւրամբնելի, մատչելի և գիտութիւնը ժողովրդականացնող դրքեր ու ընթերցանութեան նիւթեր:

Ղուբայում բացված ընթերցարանը երկրորդ քայլն է, որ անում է այդ նպատակով մեր երկրի թուրք ինտելիգենտ դասակարգը. առաջին քայլը նա արեց անցեալ տարի Բաղդադ, բանալով այդ քաղաքում նոյնպէս էթանազին զորադրան—ընթերցարան:

Սակայն որպէս զի այդ համակրելի նախաձեռնութիւնները կարողանան հասնել իրանց նպատակին և անպատու չը մնան, մեր երկրի թուրք սակաւակիւ ինտելիգենտն պէտք է աչքի առաջ ունենայ հետեւեալ կարեւոր հանգամանքը: Ապագայված և անհրաժեշտ իրողութիւն է, որ մահմետական ժողովուրդը, եթէ

այնքան խորշում է եւրոպական քաղաքակրթութիւնից, լուսաւորութիւնից և, առհասարակ, գիտութիւնից, զրա զիստաւոր պատճառն այն է, որ նա քաղաքակրթութիւնը և գիտութիւնը համարում է իբրեւ զաւակ, իբրեւ պառուկ և սեփականութիւն ըրիտոնեութեան և, հետևաբար, նա եւս թաղարում է, թէ ճաշակելով այդ պատուից, նա խմբված կը լինի ըրիտոնեական ոգով:

Խորշելով քաղաքակրթութիւնից, չը մտնենալով գիտութեան և չը վայելելով նրա բարիքները, մեր երկրի մահմետական ազգաբնակչութիւնը շարունակում է մնալ խոր ագիտութեան, խաւարի և ֆանատիկոսութեան մէջ, արտայայտում է հակադասութեան ձգտումներ և որ և է ցանկութիւն, պատրաստակամութիւն չէ ցոյց տալիս դուրս գալու իր թմրութիւնից, վնասակար և մահացնող դարձնող անշարժութիւնից:

Միակ ելքը, դարմանը նրան այդ ցաւալի վիճակից ազատելու համար—համազէ նրան, որ գիտութիւնը, կուլտուրան ըրիտոնեութեան կամ որ և է այլ կրօնի և ազգութեան սեփականութիւնը և արգասիքը չէ. նա հաւասարապէս պատկանում է և ըրիտոնեային, և մուսուլմանին, և բուդայականին. նրա վրա անստիք իրաւունք ունի և ուսուր, և հայը, և պարսիկը և թուրքը, ասիացին և եւրոպացին. նա ընդհանուր մարդկութեան անկողնապակի սեփականութիւնն է. նա հանրամարդկային է:

Հենց որ մահմետականը համազէց այդ ճշմարտութեան մէջ, նա այլ ևս անպատահելի և վայելչութեամբ չի վերաբերվի գիտութեան և եւրոպական կուլ-

Քաղաքը, ինչպէս արդէն կարելի էր եզրակացնել մի քանի ակնարկներից, շատ բարեկարգ դրութեան մէջ է. նա ունի ոչ միայն վարձու լաւ կառքեր, այլ և ձիաքարշ, կամ աւելի ճիշդ է ասել «ճիւղաքարշ» երկաթուղի, էլէկտրական լուսաւորութիւն բոլոր փողոցներում, որի լաւատեսները վառում են երեկոյեան ժամը 6-ին և վառած մնում են մինչև առաւօտեան 6 ժամը, այնքան մինչև արեւի ծագելը: Տները դրեթէ առանց բացատրութեան վայտնայ են. փողոցը էթան է, որովհետեւ երկրի մէջ կան բազմաթիւ անտառներ, մինչև անգամ կարելի է ասել, որ անտառները ծածկում են ամբողջ երկիրը: Տները զբոսովում են ոչ անմիջապէս փողոցի վրա, այլ այգիների մէջ և այդ պատճառով դրանց մէջ լոյսը և օդը անպակաս են:

Խանութները մէջ կարելի է ամեն բան գտնել և ոչ աւելի թանկ քան Եւրոպայի որ և ինչ քաղաքում: Երկրի արդիւնաբերութեան առարկաներն են զլիստաւրապէս շաքարը, զանազան տեսակի փայտը և ոսկին: Այս վերջին արդիւնաբերութեանը երկի մեծ ապագայ է վիճակված: Եթէ նա մինչև այժմ այն մեծ նշանակութիւնը չէ ստացել, որը պիտի ունենար, զրա պատճառը ճանապարհների և բանաւորների պակասութիւնն է: Բանաւորները մեծ մասամբ գալիս են Հնդկաստանից և պարտաւորվում են մնալ այս երկրում հինգ տարի, եթէ ուզում են արտոնութիւն վաճառել: Կառավարութեան ծախսով գալ այստեղ և վերադառնալ իրանց հայրենիքը:

Բացի հնդիկ «կուլիներ» ազգաբնակչութեան մեծ մասը կազմում են նեգրները, ստրկութեան ժամանակ բերված աֆրիկացիների սերունդները: Սլիտակները փոքրամասնութիւն են կազմում և թիւով մօտ 10,000 են ամբողջ երկրում, որի ազգաբնակչութիւնը, չը նայելով երկրի մեծ տարածութեանը, մօտ 300,000 է: Բացի եւրոպացիներից (որոնց մեծամասնութիւնը անգլիացիներն են) և սեմաւորներից, կան շատ փոքր թիւով, բայց

միայն երկրի խորքերում «կարմիրաթմբեք», երկրի ընդիներ, կարաիք զանազան ցեղերին պատկանող, բայց նրանք ոչինչանալու վրա են, որովհետեւ ենթակայ են արեւելոգութեան, և ուրիշ ցեղերից փախչելով և նրանց հետ չը խառնվելով, այլապէս լինում էր: Քաղաքի մէջ նրանցից մի քանի անասներ միայն կան և եւ միայն մէկին տեսայ: Բայց կան այստեղ բաւական նշանաւոր թիւով չինացիներ, որոնք, ինչպէս ամեն տեղ, աշխատաւոր և խնայող են:

Այստեղի տեղական կառավարութիւնը բաղկացած է երկրի կառավարից, որը նշանակվում է անգլիական թագուհուց, և պարլամենտից, որին մասնակցում են միայն եւրոպացիները (անգլիացիները և մի երեւո գերմանացիներ): Երկրի առևտրական յարաբերութիւններ ունենալով զանազան պետութիւնների հետ, այս պետութիւնների ներկայացուցիչներ ունի բաւական մեծ թիւով. կան այստեղ հիւպատոսներ, Զօլլանդիայի, Գերմանիայի, Շվեդիայի, Միացեալ Նահանգների, Պորտուգալիայի:

Մի գեղեցիկ կուրս, որը շատ հարուստ է, այստեղի հասարակութեան կենսութիւնն է. կայ և մի շատ գեղեցիկ մուշկում և մի ընդարձակ ու ճիւղաքարան ու ընթերցարան, որ մատչելի է ամբողջ օր և ստանում է հարկաւոր լրագրիներ և ամսագիրներ, զլիստաւրապէս անգլիական, ի հարկէ: Ինձ մտքիս այս բոլոր չըբանները և աշխատում են ամեն տեղ և ամեն կերպ որքան կարելի է հաճելի անել իմ կենսքը:

Կառավարութիւնը աշխատում է զարգացնել երկիրը, աճեցնել նրա եկամուտները և վերջերս սկսել է մասնաւոր ուշադրութիւն դարձնել ոսկու արդիւնաբերութեան վրա: Եւ ուրախ կը լինեի, եթէ ինձ վիճակվէ հետազոտութեան միջոցով նպաստել երկրի նիւթական զարգացման:

Ա. Արծրունի

